

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒ

ՌՈՒՍԱՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ:

Վաղուց արդէն Հայերէն լեզուն Նւրոպայի, գլխաւորապէս գերմանացի լեզուագէտների քննութեան առարկան է է եղած: Եւրոպականների հետազոտութեանց շնորհիւ այսօրուան օրս բոլոր լեզուագէտ ուսումնականները կրնադունեն, որ նա Սանսկրիտ և Օւնդ լեզուների հետ սերտ կապակցութիւն ունենալով իրանական ցեղին կ'պատկանի: Հայերէն լեզուն արեւմտեան Նւրոպայում ոչ միայն մի քանի անհատների պարապմանց առարկան է դարձած. այլև իրանական ցեղի միւս լեզուների հետ կ'աւանդուի բարձր ուսումնարանների մէջ: Ուսաստանում 1840 թուականէն սկսեալ Վազանի և Պետերբուրգի համալսարաններին մէջ, արեւելեան միւս լեզուների հետ կ'աւանդուէր և հայերէնը: Յետ ժամանակաց այլևայլ հանգամանաց պատճառով Վազանի համալսարանի արեւելեան բաժինը ծածկուեցաւ և արեւելեան բոլոր լեզուների դասախօսութիւնը կենդրոնացաւ միայն Պետերբուրգի համալսարանում ընդ որս և հայերէնը: Մինչ 1870 թիւը հայերէն լեզուն թուրքաց և վրաց լեզուների հետ մի առանձին խումբ կ'կազմէր առանց որ և իցէ ուսումնական հիմունքի, այլ միայն հաւանական է կարծել որ մի կողմէն աշխարհագրական դրութիւնը և այդ երեք ազգերի միմեանց հետ սերտ հաղորդակցութիւն ունենալը, իսկ միւս կողմէն Վովկասում արքունական ծառայութեան համար այդ լեզուներին մէջ հմուտ եղող անձինք պատրաստելը

աչքի առաջ ունենալով համալսարանական վարչութիւնը այդպիսի խումբ է կազմել: Սակայն անցեալ տարի Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆէսոր Պ. Սոսսովիչը առաջարկեց արեւելեան բաժնի պրոֆէսորների խորհրդին, որ Սանսկրիտ և Պարսից լեզուների հետ աւանդուի այդ լեզուն, այն պատճառով, որ արիական լեզուների բառերի կազմուածքը և քերականական ձևերը լրիւ և ճշտութեամբ բացատրելու համար հայերէն գրաբառ լեզուի գիտենալը շատ կարեւոր է. իւր միտքը հաստատելու համար յառաջ բերեց յետագայ շարժառիթ պատճառները: Գլխաւորապէս գիտնականները վաղուց արդէն սկսել են մշակել Հայերի պատմական գրականութիւնը, այնինչ գերմանացի լեզուագէտները հայկական լեզուի մի ուրիշ կողմին են դարձրել իւրեանց ուշադրութիւնը այն է նորա կազմութեանը: Հայկական լեզուի բառերը և ձևերը առատ նիւթ կ'պարգեւեն մեզ լեզուների արիական ծիւղը բաղդատական կերպով ուսանելու համար. հայերէն լեզուն իրանական ցեղին է և ամբողջապէս պահել է իւր կապը Նւրոպական ծիւղը արիական լեզուների հետ: Եւրոպականների կապը յայտնի էր նոյնպէս լեզուագիտութեան հիմնադիր Գրանց Բուպպին, որ իւր բաղդատական քերականութեան երկրորդ տպագրութեան մէջ դրքի մեծ մասը այս լեզուի քննութեամբ լցուց: Նշելով նոյն յատկութեան վերայ միևնոյն ուշադրութիւնը դարձրին Վինդիշմանը, Բէդլսթըրը, Գօշէն և ուրիշները:

Եւ յիշ Պէտերբանը Բէրլինում, Գր. Միլլըրը Վիննայում, Իւստին և ուրիշ

Պերմանացի ուսումնականներ կը պարապին այդ լեզուի քննութեամբ և դասախօսութեամբ:

Հայերէնի գիտենալը շատ դիւրացրեց փոքր Ասիայի հին ազգերէն մնացեալ արձանագրութիւնների բացատրելը: Երկական արմատի սկզբնական լեզուները, որ են. Սանսկրիտը և Օւնգը ուսանելու համար հայերէն գրաբար լեզուի իմանալը բաց կանէ մեր առաջ սեպած արձանագրութիւնների մշակման ասպարէզը, որով հարուստ է հին Հայաստանը և որ Պերմանացի և Անգղիացի ուսումնականների պարապմանց առարկան է դարձել: Վերոյիշեալ պատճառները աչքի առաջ ունենալով Պ. Առստովիչը խնդրեց արեւելեան բաժնի խորհրդէն միջնորդելու, որ հին Հայերէն լեզուն ևս դաս տրուի Սանսկրիտ և Պարսից լեզուների հետ: Այս տեղ Պ. Առստովիչը ասաց, որ այդ բաժնի ուսանողներէն շատերը բաղդատական լեզուագիտութեան մէջ լիովին հմուտ լինելու համար պրօֆէսոր Պարոն Պատկանեանէն մասնաւոր դասեր կ'առնեն:

Արեւելեան բաժնի խորհուրդը հաճ և հաւանութեամբ ընդունելով Պարոն Առստովիչի առաջարկութիւնը, իւր կողմէն ևս առաջարկեց համալսարանական ընդհանուր խորհրդին, հայերէն լեզուն Սանսկրիտ և Պարսից լեզուների հետ դասախօսութեան համար: Համալսարանական խորհուրդը տեսնելով այդ առաջարկութեան իրաւացի լինելը ընդունեց և հաստատեց նորան, ուստի այժմ հայերէն լեզուն Սանսկրիտ և Պարսից լեզուների հետ կ'մատակարարուի ուսանողաց:

Պէտէրբուրգ

* *

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅՈՒՂՈՒԹՅՈՒՆ

Հայկական Մատենադրութիւնը տասն և եօթներորդ դարուց սկսեալ, տեսնում ենք որ, մեծ հանդիսով Աւրոպականաց ուշքն ու միտքն գրաւէր և իւր հետաքրքրելի արժանաւորութեամբք զինքն քննել և քրքրել է հրաւիրէր զնոսա:

Այդ արժանաւորութիւնք պէտւորապէս կայանում են առաջին յայնմ որ Աւրոպական Հայագէտ ուսումնականք հետզհետէ Հայոց պատմութեան հետ ծանօթանալով գտանում են նորա մէջ արեւմտեան Ասիոյ ազգաց, Երաբացւոց, Մոնղոլաց, Խաչակրաց Ասիոյ մէջ կատարած գործոց վերաբերութեամբ այնպիսի ծանօթութիւններ՝ զորս ոչ Արեւմտեան և ոչ Արեւելեան պատմագիրք են աւանդում:

Եւրկրորդ՝ Հայոց գրականութեան շնորհիւ լոյս տեսին մի քանի Յունական նշանաւոր գրեանք, որոց բնագիրք կորած են բոլորովին:

Եւրրորդ՝ որ Հայոց լեզուի, նորա բառից կազմութեան և ձևոց ծանօթութիւնը և քննութիւնը մեծ սատար հանդիսացան լեզուագիտութեան բարգաւաճման և յառաջադիմութեան:

Այս վերոյիշեալ և այսպիսի հանգամանքներն են պատճառ, որով Հայոց լեզուի դիտութիւնը և Հայոց գրականութիւնը գրաւէր են Աւրոպականաց ուշադրութիւնը և նշանաւոր տեղ ունին նոյա գրուածոց և թարգմանութեանց մէջ: Այն աստիճան է Հայկական մատենագրու-